

որոց անդրանկանս՝ ետ Լեւոն գանդրանիկն Ռուբինի՝ զԱլիծ, եւ պաշտատական նմա զքաղաքն եւ զգաւառ Մսւսայ. իսկ կրսերոյն՝ Շահնշահի՝ ետ ՚ի կալուած զՍելեւկիայ վիճակն, խոստմամբ որպէս թուի՝ Փիլիպպինեայ, զի դեռաբուսիկ էր սա, եւ սնանէր առ հանույ իւրում Ռիթայ (մօր Լեւոնի): Յետ ամաց լոկ վեցից, այն է յամի 1193, ՚ի միում ամսեան ժամանակի՝ յորում վախճանեալ էր կաթողիկոսն Գր. Տղայ (՚ի 16 մայիսի), մեռան եւ երկոքին սոքա եղբարք, ոչ յայտնի ինչ բոնօրէն մահուամբ. այլ զի զուգաժամանակ եղեւ կատարած երեցուն եւս արենակցացն, եւ զի՝ թուի իմն թէ իւր ինչ գոյր ընդ նոսա եւ ընդ Լեւոն, զոր ոչ յայտնեաց պատմութիւն, համարեցաւ յոմանց, ըստ համառօտ ժամանակագրի, թէ «Լեւոն եղեւ պատճառ մահուան նոցա». յոր կարծիս անկեալ երեւի եւ ինքն գրողն, թէպէտ եւ ըստ արեւելեան սովորեալ ոճոյ յաւելուցու, «այլ ճշմարիտն Աստուծոյ է գիտելի»: Ի նոյն ստիպիմք եւ մեք թողուլ, մինչեւ յայտնեսցէ ինչ պատմութիւն զգործոց Սասնեցոցն եւ զեղանակէ վախճանի նոցին, զի այլուստ ինչ ոչ գիտեմք:– Եթէ հարսնացեալ էր Փիլիպպինեայ ՚ի Շահնշահ եւ եթէ ոչ՝ այն չէ յայտ, բայց այս՝ զի երկոքին եւս քորքն այրիացեալք էին, որպէս թուի, մինչ չեւ ՚ի կատարեալ չափ ամուսնութեան հասեալ⁸: Երեցն՝ Ալիծ՝ յերկրորդում ամին (1194) տուաւ ՚ի կնութիւն Ռեմունդի, անդրանկան եւ ժառանգի Բրնձին Անտիոքայ, որպէս տեսցի յառաջիկայո, եւ ծնաւ **զՌուբէն Բրինձ**, զպատճառ բազում անցից հակառակութեանց ընդ նորայն իշխանութիւն եւ ընդ Լեւոնին, թէ եւ վասն հաստատելոյ զխաղաղութիւն ՚ի միջի իւրեանց՝ արարաւ ինամութիւնն այն. եւ առ առաւել եւս սերտել զնոյն՝ ինքն իսկ Լեւոն, որ առ քաղաքական տեսութեանց թուի ցայն վայր ամուրի կացեալ, էած իւր կին զդուստր եղբօր կնոջ Բրնձին Անտիոքայ (Գ Պեմունդի), *Իզապէլ* կամ *Զապլուն* անուն. եւ այսպէս համարէր յապահովել զահեակ կողմն, զարեւելեանն՝ տէրութեան իւրոյ. իսկ յամրութիւն աջոյն, այն է արեւմտայնոյն, ուր առ կոան կայր ախոյեան գոռ եւ այլադէն՝ սուլտանն Իկոնիոնի, զկրսեր դուստրն Ռուբինի զՓիլիպպինէ, (զոր առ գամ մի խաբէութեամբ խոստացեալ էր տալ Օշնի՝ անդրանկան Հեթմոյ տեառն Լամբրունի, եւ այնու՝ իբրեւ խայծիւ՝ որսաց գնա ՚ի թակարդ իւր), վիճակեցոյց զերագոյն գահու, նորահաստատ Նիկիական կայսերութեանն Յունաց, տալով ՚ի կնութիւն Թէոդորի Ա Լասկարեայ կայ-

⁸ Երիցու քեռն իսկ՝ Ալիծի՝ հագիւ յայնժամ մարթ էր լինել երկոտասանամեայ: